

ՀԱՄԵՍԱՏՈՒԹԻՒՆ ԸՆԵԼՈՎ ԼՈՒԵ՞ՆՔ:
ԹԷ՞ ԻՆՔՆԱԳՈՎՈՒԹԻՒՆ ԸՆԵԼԸ
«ԱԶՔ ԱՌՆԵԼՈՎ» ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ՅԱՅՏՆԵԼ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2000-ԻՆ,
«ՆԱՅԻՐԻ»Ի ՄԷՋ ԳՐԵՑԻՆՔ...
ԼԵՒՈՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ԱՄՆ-Ի
ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԻ՞Ց ՄԸՆ Է...

ԳՐԵԹԷ 10 ՏԱՐԻՆԵՐ ՅԵՏՈՅ՝
ՕԳՈՍՏՈՍ 2010-ԻՆ, ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ-ԱՄՆ-ԷՆ
«ՆԱՅԻՐԻ»ԻՆ ՂՐԿՈՒԱԾ ԻՐ ՅՕԴՈՒԱԾԻՆ ՄԷՋ,
ՍՏԵՓԱՆ ԹՕՓՉԵԱՆ ԿԸ ԿԿԱՅԷ, ԱՊԱՑՈՅՑՆԵՐՈՎ,
ՈՐ Լ. Տ. Պ. ԱՄՆ-Ի ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹԵԱՆ
ԿԱՄԱԿԱՏԱՐ ՄԸՆ Է

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ)

«Նայիրի»ի մէջ մեր գրութիւններուն հետեւողները կը յիշեն թերեւս, որ մենք, դեռ առաջին օրերէն գրեցինք, ՀՀ-ի Գ. Հանրապետութեան Ա. Նախագահին ԱՄՆ-ի հետախուզական Սպասարկութեան պատուէրները գործադրող մը ըլլալու հաւանականութեան մասին:

Այստեղ օգտակար և այժմէական կը նկատենք հրատարակել 19 Սեպտեմբեր-2000-թ-ին «Նայիրի»ի մէջ լոյս տեսած մեր գրութենէն հատուած մը՝

Ո՞Վ Է ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ
ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ՝ ՀԱՅՆ Է-
ԿԵՂԾ ԱԶԱՏԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԻՄԱԿՈՎ
ՀԱՅԵՐՆ ԵՆ

Եւ 1759-թ.ներէն մինչեւ մեր օրերը, այս ղեկավար դաւաճաններուն զօրը եղաւ հայ մեծ Ազգը:

Մինչեւ 1991-թ-ը, աւելի քան երեք ու կէս միլիոն բնակչութեամբ Հայաստանը, Խորհրդային Միութեան մէջ, ամենէն բարգաւաճ հանրապետութիւններէն էր:

Մինչդեռ այսօր, 2000 թուականին, Հայաստանը թշուառութեան մէջ է, ժողովուրդն ալ՝ դժբախտ է և անգործ: Եւ Հայաստանի մէջ մէկ միլիոնէն քիչ աւելի հայ մնացած է:

Այս մնացողներն ալ, եթէ առիթը գտնեն, պատրաստ են Հայաստանը լքելու, թշուառութեան և անապահովութեան պատճառաւ:

Այս է տխուր իրականութիւնը այսօրուան Հայաստանին:

Ճիշդ 1920-թ.ներու այն շատ ծանօթ նկարին նման, որու մէջ, Հայաստանի աւերակներուն վրայ նստած հայ մայր մը կու լար ու կ'ողբար՝ ԹՇՈՒՎՈՒ ԵՒ ԱՆՏԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ:

Բարեբախտաբար 1920-թ-ին, հայուն օգնութեան հասնող Ռուս Ազգին շնորհիւ, հայերը փրկուեցան ամբողջական բնաջնջումէ և պետականութիւն մը ունեցան:

Եւ խաղաղութեան մէջ ապրող հայերը, քանի մը տասնամեակներ յետոյ, ներկայանայի ու յարգանք պարտադրող դիրքի մը հասան:

Այն աստիճանի՝ որ 1981-թ-ին Պոլիս այցելող Վազգէն Ա., մեծ և իմաստուն Կաթողիկոսը, հպարտութեամբ սապէս ըսած էր՝

«ԵՍ ԵՐԿՐԷ ՄԸ ԿՈՒ ԳԱՄ, ՈՒՐ ԵՐԵՔ ՀՈԳԻԷՆ ՄԷԿԸ ԳԻՏՆԱԿԱՆ Է»:

Այդ տարիներուն մենք Պոլիս էինք: Եւ կ'ապրէինք ստրուկի հոգեվիճակով: Եւ Վազգէն Վեհափառ-Կաթողիկոսին այս խօսքերը մեզ ոգեւորեցին, և պարծանք զգացինք հայ ըլլալով:

Նոյն տարիներուն էր՝ ծանօթացանք գործով Պոլիս եկած Կարսեցի թուրքերու հետ: Եւ այս թուրքերուն պատմածները մեզ ա՛լ աւելի ուրախացուցին:

«ԿԱՐՍԸ ԵՒ ՇՈՒՐՋԻ ԳԻՒՂԵՐԸ ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱԽԱՐԻ ՄԷՋ ԵՆ: ՄԻՆՉԴԵՌ ԿԱՐՍԻ ՇՐՋԱԿԱՅՔԻ ԲԼՈՒՐՆԵՐՈՒՆ ՎՐԱՅԷՆ ԿԸ ԴԻՏԵՆՔ ՍԱՀՄԱՆԱԿԻՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԵՐԸ ԵՒ ԶԱՂԱՔՆԵՐԸ՝ ՈՐՈՆՔ ԿԸ ՓԱՅԼԻՆ, ԼՈՅՍԵՐՈՒ ՄԷՋ ԿԸ ՇՈՂԱՆ»:

Տասը տարուան մէջ, ուրկէ ո՛րք հասանք:

Պատկերացուցէ՛ք՝ տասը տարի առաջուան Հայաստանի բարգաւաճ վիճակը: Եւ զայն բաղդատեցէք այսօրուան Հայաստանի գրեթէ տօգոյն, քառասային վիճակին հետ:

Եւ մտաբերեցէք Կիւմրիի (նախկին Լեւոնական) այն հայ ղեկավարները որոնք, քանի մը ամիս առաջ, թուրքերուն «Մանկլաւիկութիւն» ընելու համար [աւելի ճիշդ՝ ողորմութիւն ստանալու համար] Կարս կ'երթան և հոնկէ կը վռնտուին թուրքերուն կողմէ:

Ա՛յս է ներկայի «Ազատ և Անկախ» ըսուած, Գովուած Հայաստանին իսկական պատկերը:

Եւ ա՛յս է կեղծ ազատարար ղեկավար Լեւոն Տէր Պետրոսեանին կողմէ սահրանքներով ստեղծուած «Ազատ ու Անկախ Հայաստան»-ին [կարելի է ըսել] խղճայի վիճակը:

Եւ ա՛յս է «Թշուառ և անտէր» ու հոգիով և մարմնով տակա՛ւ դատարկըող «Հայաստան»-ը:

Ռուբէն Սեւակ 1909-թ-ին, Կիլիկիոյ ջարդերու շրջանին, հայ ժողովուրդին ցուցաբերած անտարբերութեան դէմ ընդվզելով սապէս գրած էր՝

«Ե՛ՐԲ ԱՅՍ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԻՏԻ ՍՈՐՎԻ ՄԱՐԴԿՕՐԷՆ ԿԱՏՂԻԼ»:

Մենք կը հաւատանք, որ Ռուբէն Սեւակին մատնանշած «Մարդկօրէն կատղելու» անկարողութիւնը, հայ ազգին մեծագոյն թերութիւններէն մէկն է:

Դարեր տեւած ստրկութեան հետեւանքով հայ ժողովուրդին մէջ, շատ տկարացած էր «Ազգային ջիղը», հայ Ազգին կրած-եցնթարկուած անարդա-

րուքիւններուն դէմ ընդվզելու կարողութիւնը, և մանաւանդ՝ հայ ազգին դէմ կատարուած վնասաբեր արարքները ախտաճանաչելու յատկութիւնը:

18, 19, և 20-րդ դարերու Հայոց Պատմութիւնը լեցուն է՝ հայ Ազգին կենսական շահերուն դէմ գործող կարգ մը հայ ղեկավարներու պառակտիչ ու քանդիչ արարքներով:

Սկսելով Մխիթար Սեբաստացիէն, Ներսէս Վարժապետեան և Մաղաքիա Օրմանեան Պատրիարքներէն, Գրիգոր Զօհրապէն, Լեւոն Ծանթի Դաշնակցական խմբակէն, հասնելով մեր շրջաններու տիրահռչակ անձնաւորութիւններուն՝ Պարոյր Հայրիկեանին և վերջապէս՝ Լեւոն Տէր Պետրոսեանին գլխաւորած «Ղարաբաղի կոմիտէ»ի անդամներուն:

Հայ ազգը, իր Գողգոթան պատրաստող այս հայ որոշ ղեկավարներուն դէմ, երբեք չէ ընդվզած և մանաւանդ՝ «Մարդկօրէն չէ կատղած»:

Այստեղ, աւելի տեղին ու այժմէական կը նկատենք, Խորհրդային Հայաստանը կործանող Լեւոն Տէր Պետրոսեանին մասին արտայայտուիլը:

Ասոր հիմնած «Ղարաբաղի Կոմիտէ»ի պատմութիւնը, անմիջականօրէն կապ ունի Հայկական Գաղտնի Բանակին հետ: Իրականութեան մէջ, Լ.Գ.Բ.ը և Ղարաբաղի կոմիտէն Ռուսերուն և Ամերիկացիներուն միջեւ մղուող «Պաղ պատերազմ»ին նորագոյն հանգրուաններն են:

Ամերիկեան Արտաքին Հետախուզութեան Կառոյցը, իրենց մէկ գործակալին՝ Սոնթէ Մելքոնեանին ձեռամբ, 1983-թ-ին Լ.Գ. Բանակը խորտակելէ ետք, անմիջապէս գործի անցաւ, որ Կովկասի մէջ Ռուսերուն միակ, իսկական բարեկամը եղող Սովետական Հայաստանը ներսէն քանդէ:

Արդէն իրենց գործակալ նկատուած Պարոյր Հայրիկեանը, իր հրեայ կնոջը հետ, Խ. Հայաստանի մէջ քայքայիչ աշխատնք կը տանէր: Բայց ան, ժողովուրդին մէջ, իբր Արեւմուտքի գործակատար՝ ծանօթ էր, և ժողովուրդը իր ետեւէն չէր երթար:

Այդ պատճառաւ ուրիշ անձնաւորութիւն մը գտան՝ Լեւոն Տէր Պետրոսեանը որ 1946-թ-ներուն, ընտանիքին հետ Սուրիայէն Հայաստան հայրենադարձուած էր:

Յաւելուած՝ «Կաթողիկէ» էր:

Եւ մանաւանդ՝ կինը հրեայ էր:

Կ'ըսուի, թէ Լ.Տ.Պ. ամերիկացիներուն ցուցմունքներով կոմիտէ մը հիմնեց, որուն անդամներուն շատերուն կիները հրեաներ էին:

Եւ այս կոմիտէին նպատակը, իբր թէ, Ղարաբաղը ազատագրել և Հայաստանին կցել էր:

Խորհրդային Միութեան մէջ, Կորպաչեւի ծախաւեր և թուլամորթ իշխանութեան տարիներն էին:

Եւ հայ ժողովուրդէն մեծ մաս մը, որ մինչ այդ քաղաքական որեւէ հասունութիւն և փորձառութիւն չունէր, Ղարաբաղի Կոմիտէին կազմակերպած ցոյցերուն մասնակցիլ սկսաւ, Թատրոն կամ Օբերա երթալու պէս:

Հայ ժողովուրդին համար այս ցոյցերը, տեսակ մը խաղ էին, զբօսանք:

Անոնք, տարիներէ ի վեր «Ծարաւ»ն ունէին պողալու, կանչելու և ցոյցեր ընելու:

Եւ առանց հետեւանքներու մասին մտածելու, տասնեակ ու անելի հազարներով հաւաքուեցան Օբերայի հրապարակին վրայ:

Սկիզբը, Ղարաբաղին Հայաստանին միացումը կ'ուզէին: Յետոյ՝ Հայաստանին անկախութիւնը և ռուսիայէն խզումը պահանջել սկսան: Գիճովցած, անելի ճիշդ՝ խելագարած: Եւ կը հաւատային, որ այս ցոյցերով Ղարաբաղը Հայաստանին պիտի միանար:

Այս ցոյցերուն արդիւնքը այն եղաւ, որ Ղարաբաղը Սովետական Հայաստանին միանալու տեղ՝ Հայաստանը Սովետական հզօր Միութեանն անջատուեցաւ և Հայաստանը իբր թէ «Ազատ և անկախ» Պետութեան մը վերածուեցաւ:

Այս ձեռով՝ Լ.Տ. Պետրոսեանի ղեկավարած Ղարաբաղի ծանօթ Կոմիտէին «Շնորհիւ», կ'ըսուի, թէ իրականացաւ, Ամերիկեան «Սի. Այ. Էյ.» կազմակերպութեան Հայաստանի համար նախատեսած նենգ ծրագրին Ա. հանգրուանը:

**

Ամերիկացիներուն Հայաստանի համար նախատեսած ծրագրին Բ. հանգրուանին գործադրութիւնը, շատ անելի դիւրին էր:

Ո՞վ չէր ուզեր Հայաստանին, իր հայրենիքին ազատ և անկախ ըլլալը:

Բայց անկախութիւնը՝ փառփառքի հարց չէր, կարելիութեան հարց էր:

Հայաստանը ի՞նչ հարստութեան տէր էր, և ի՞նչ եկամուտ ունէր, որ պիտի կարենար, միս մինակ գոհացնել հայ ժողովուրդին ապրուստի պահանջը: Ոչինչ:

Յետոյ՝ շատ ծանօթ կարգախօս է՝ «Հօտէն բաժնուող ոչխարը, գայլերուն զոհ կ'ըլլայ»:

Առանց Ռուսիոյ օգնութեան՝ Հայաստանը ո՞վ պիտի պաշտպանէր թուրքերուն յարձակումներուն դէմ:

Բայց, ամենէն կարեւորը՝ ազատ ու անկախ պետութեան մը մէջ, տիւ ու գիշեր գիճը դարպասող ապրուստի արհելի դժուարութիւններու ենթարկուող ժողովուրդ մը, եթէ ինքզինքը ապահովութեան մէջ չզգայ, ի՞նչ կ'ընէ -կը լքէ իր երկիրը:

Ահա, այս էր Ամերիկացիներուն Հայաստանի համար նախատեսած Բ. հանգրուանը: Ամերիկացիները, բոլոր միջոցներով, հայերուն ճնշեցին, մոլորեցուցին ու մղեցին, որ Հայաստանը լքեն: Եւ մասամբ ալ յաջողեցան:

Եւ հայ ժողովուրդը այսօր, դե՛ռ կը պարպէ Հայաստանը, [ո՛չ նախկինին համեմատութեամբ բարեբախտաբար]: Եւ Ամերիկան, իր զանազան առաւելութիւններով, ծրի «վիզա»յի դրութեամբ կը քաջալերէ հայերը, որ մեկնին և լքեն իրենց հայրենիքը: Այս է Հայաստանի ներկայի, մեզի համար շատ ափսոսալի՝ վիճակը:

**

Այստեղ կը հրատարակենք Լոս Անճելըսէն «Նայիրի»ին ուղարկուած Ստեփան Թօփչեանի՝ «ԻՄԱՆԱԼՈՎ Ո՛Վ Է ԼԵԻՈՆԸ» վերտառութեամբ յօդուածէն հատուածներ

«ԻՄԱՆԱԼՈՎ Ո՛Վ Է ԼԵԻՈՆԸ...»

ՍՏԵՓԱՆ ԹՕՓՉԵԱՆ

ՀՄՍՄ միմիստրների խորհրդի նախագահի նախկին առաջին տեղակալ Ալեքսան Կիրակոսեանը պատմել է. «Ո՛վ տիրապետում է Շուշիին, նա տիրապետում է Ղարաբաղը: Ո՛վ տիրապետում է Ղարաբաղը, նա տիրապետում է Ջանգեզուրը: Լաչինի, Բելաջարի մասին խօսք լինել չի (→էջ 9)

Ո՞Վ Է ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ԹՇՆԱՄՆ... (Շար. էջ 2-էն)

Կարող: Ջանգելանի մի մասը պետք է միացուի Հայաստանին: Աղղամի, Շահումեանի, Գետաշենի մասին խօսք լինել չի կարող: Սրանք անվտանգութեան երաշխիքներ են: Զոի ծախ արհիւն 200 հայկական գիւղ ունէինք: Ադրբեջանում 1 միլիոն հայ էր բնակում: Ո՞ւր են այդ հայերը: Մենք չկարողացանք քարոզչական պատերազմում ասել, որ այս հողերը մերն են: Լեւոն Տէր-Պետրոսեանը երբ իմացաւ, որ Շուշին ազատագրել ենք, գոյնը գցեց: Պէտք է Զյուրդամիրն ու Եվլախը եւս ազատագրէինք...» [«Ազգ», 11 Ապրիլ, 2001]: Այլ հաստատումներ եւս կան, որ ՀՀ երբեմնի նախագահը դէմ է եղել ոչ միայն Շուշիի, այլեւ Քելթաջարի ազատագրմանը: Աւելին, ՀՀ արտգործնախարար Ժ. Լիպարիտեանի հետ պատրաստ էր Քելթաջարը վերադարձնել Ադրբեջանին, «Խաղաղութեան» փոխարէն լտես՝ իմ «ԱՅԴ ԳԱՐԾ ՆԻԻԹԸ...» յօդուածը- «Ասպարէզ», 4 Օգոստոսի 2010]:

Ահա, եւս մի վկայակոչում: «Թերհանում էր, երբ հրանօթներն սկսեցին դողդալ Քելթաջարի կիրճերում: Դատելով նրա շփոթուած արձագանքից՝ նրան չէին տեղեկացրել յարձակման մասին, մինչեւ որ տանկերը մտան Թարթառի կիրճը: Հենց որ լուրը նախագահին հասաւ, նա մի զայրացած նամակ կրակեց պաշտպանական ուժերի ղեկավարութեանը... Տէր Պետրոսեանը սկսել էր իր նախագահութիւնը Արեւմուտքին հաճոյանալու վճռակամութեամբ՝ Մոսկուային արհամարհելու, Թերհանից հեռու մնալու և ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի հետ մերձենալու ճանապարհով»: Արեւմուտքի կամակատար ՀՀ նախագահը փորձում էր կատարել իր արտասահմանեան տէրերի հրահանգը: ԱՄՆ Պետդեպարտամենտն էր առաջիններից, որ Ապրիլի 5-ին, «Խիստ բողոք» արձանագրեց: «Միացեալ Նահանգների կառավարութիւնը դատապարտում է այս յարձակումը»- կոկոռում էր Պետական քարտուղար Ուորրեն Զրիստոֆերը՝ մի մարդ, որը հրճուանքով էր լցուել, երբ Թուրքիան յարձակուեց Իրաքեան Զրդստանի վրայ, իսկ Իսրայէլը՝ Լիբանանի: Յետոյ, Եւրոպական համայնքը և «Միացեալ Ազգերի Անվտանգութեան Խորհուրդը» հետեւեցին նրանց օրինակին»:

Ազատագրուած տարածքների գիջումներով Հայաստանի տնտեսութիւնը զարգացնելու անհեթեթ գաղափարը ոչ մի կերպ դուրս չի գալիս նրա և իր համախոհների ոչ պակաս «Հանճարեղ» ուղեղներից: Հերթական անգամ հաստատուեց ՀՀԾ 16-րդ համագումարում... «Առանց Ղարաբաղեան հակամարտութեան ու հայ թուրքական յարաբերութիւնների կարգաւորման, Հայաստանը չի կարող զարգանալ»:

տանը անվտանգութեան, տնտեսական զարգացման և ժողովրդագրական վիճակի բարելաւման հեռանկար չունի, անկախ այն հանգամանքից, թէ ում ձեռքում կը լինի իշխանութեան դեկը... Քանի դեռ դարաբաղեան հակամարտութիւնը կարգաւորուած չէ, պատերազմի վտանգը վերացած չի կարելի համարել: «Փոխզիջման այլընտրանքը պատերազմն է» պնդումը իր ուժը չի կորցրել և երբեք չի կորցնի» [«Հետք» օրաթերթ, Յուլիսի 17, 2010]:

* * *

Բազմիցս նշուել է որ «Փոխզիջում» չկայ, քանզի Ադրբեջանը ոչինչ չի զիջում, պահանջում է ողջ Արցախը Արցախը, հերթի է Ջանգեզուրը, անելին՝ շարունակ ու լկտիօրէն պնդում է, որ Հայաստանի Հանրապետութիւնն էլ ադրբեջանական հողերի վրայ «Ինքնորոշուած» միաւոր է: Պատերազմի այլընտրանք, ուստի, չի կարող անգոյ «Փոխզիջումը» լինել: Թրքախոստում խաղաղութիւնը կոտորածն է: Ուստի անհնար է խաղաղութիւն ստանալ, ողջ Արցախն ու Ջանգեզուրը անգամ նուիրելով: Նրանց բուն նպատակը Հայաստանի դիակի վրայով «Մի ազգի» Թուրք-Ադրբեջան մի պետութիւն հիմնելն է: Նոյն նպատակն է հետապնդում Լեւոնական ամբոխների ազգուրաց, «Հանճարեղ» կուռքը, տարածքներ զիջելու երկարամեայ իր տաղտկալի յանկերգով: Քաղաքական կուրութիւնը խանգարում է տեսնել այս բացայայտ վտանգը-կարծում ենք, ժողովրդի տուած «Քոռ» [կոյր] մականունը լոկ բանահիւսական նշանակութիւն չունի, չի կարող չտեսնել իրականութիւնը:

* * *

Մոռանանք «Ազգային գաղափարախօսութիւնը կեղծ քաղաքական կատեգորիա է» դարակազմիկ մտայղացումը, քանզի այժմ ԼՏՊ-ն իր լեւոնականներով ծուարել է, այսպէս կոչուած՝ Հայ ԱԶԳԱՅԻՆ Կոնգրեսում: Հասկացան, որ անելի լաւ է ԿԵՂԾ ԱԶԳԱՅԻՆԸ, քան թէ «ԱՆԿԵՂԾ» ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ: Այսուհանդերձ, ով ինչպէս, բայց ԼՏՊ-ն պատմութեան մէջ կը մնայ առնուազն, «Փոխզիջման այլընտրանքը պատերազմն է», «Մեր պաշտպանութիւնը մեր անպաշտպանութեան մէջ է», Պատմութիւնը կեղծ գիտութիւն է», «Շոկոտերապիա նշանակում է՝ շոկ թերապիայի միջոցով», «Փող չունե՞ք, հարեւանից պարտք առէք» և այլ անմահ աֆորիզմներով: Վերջին սոցիալ-տնտեսական խորիմաստ յայտնագործութիւնը սակայն փոխադրելով արտաքին յարաբերութիւնների ասպարէզ, որոշեց ո՛չ թէ հարեւանից պարտք առնելով ազգի գոյատեւման փուլէ յոյսեր փայփայել, այլ հարեւանից տարածքներ նուիրելով քաջնազարապէս՝ ազգը ռադ անել երկրից ու այս աշխարհից: [Ծանօթագրումը՝ նախավերջին նախադասութեան. (→էջ 4)]

Ո՞Վ Է ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ... (Շար. էջ 3-էն)

«...Ուղղակի ապացույցներ-կարդում ենք Լ. Միքայելեանի վերոնշեալ յօդուածում- մեր տրամադրութեան տակ դեռես չունենք... մինչդեռ, եթէ ի մի բերենք տարբեր մարդկանց առանձին վկայութիւնները, օրինակ՝ Մ. Ստամբուլցեանի և այլոց հաստատումները Ժ. Լիպարիտեանի և ԼՏՊ-ի մասնութեան... բանտարկութիւնից ազատուելուց յետոյ «Փարիզի որոշ շրջանները այցելելու մասին... ապա կը ստեղծուի բաւական յստակ ու ամբողջական պատկեր»]:

* *

«Գոլոս Արմենիի» ներկայ հրապարակումներից յետոյ ո՛չ անձամբ ԼՏՊ-ն, ո՛չ ՀՀԾական ու ՀՀԾամերձ մամուլը հերքման ո՛չ մի փորձ չեն արել: Որեւէ երկրում նման հրապարակումներ յայտնուէին՝ մեծ աղմուկ կը բարձրանար: Բայց ո՛չ Հայաստանում, ո՛չ անգամ Սփիւռքում: Հայը դարերով վարժուե՞լ է դաւաճանների գոյութեանը: Անխուսափելի, միանգամայն «Հասկանալի», միանգամայն «Բնական» գոյութեանը: Աւելի եւս՝ «Բնական», երբ ազգուրաց դաւաճաններին շրջապատում են յաճախ ահռելի զանգուածներ-չմոռանանք ՀՀ նախագահի վերջին ընտրութիւններում ԼՏՊ-ն ստացաւ ւելի քան 350 հազար ձայն: Անհնար է անբուժելի Լեւոնապաշտութեամբ տառապողներին հասկացնելը, որ իրենց անփոխարինելի կուրքը օտարերկրեայ յատուկ ծառայութիւնների կամակատար է: Եթէ դա յօրինուածք համարենք, անհասկանալի կը մնայ՝ ի՞նչն էր դրդում նրան և նրա ՀՀԾական գինակիցներին իշխանութիւն նուաճելու առաջին օրուանից առ այսօր յամառօրէն պահանջել Արցախի զոհաբերում Ադրբեջանին, սկսելով ազատագրուած տարածքներից: Եւ ընդհանրապէս, ինչո՞ւ են ձգտում թուրքադրբեջան հարեւանների հետ յարաբերութիւններ հաստատել միակողմանի գիջումներով ու ի վնաս Հայաստանի և հայ ժողովրդի: Բայց խնդիրը չի սպառում ՊԱԿ-ի և ԿԶԿ-ի հետ նրա առնչութիւններով: Հետաքրքիր է, օրինակ, թէ ե՞րբ է սկսուել և ինչքա՞ն կը տեւի Իսրայելի դրօշի տակ նրա պարը, որի մի հատուածի լայդ անգամ անթասակ) ականատեսը երեւանի Ազատութեան հրապարակում հաւաքուած ժողովուրդն էր:

Լուս Անճելրս, Օգոստոս 2010, ՄՏԵՓԱՆ ԹՕՓՉԵԱՆ

* *

* *

ԱՄՆ-ի ծանօթ հետախուզութեան լծակից Լեւոնի մասին վերը նշուած իրականութիւնները, իսկական բոլոր հայրենասէր հայերուն ծանօթ էին:

Բայց ինչպէ՞ս կարելի է բացատրել, որ Հայաստանի 2008 նախագահական ընտրութիւններուն ԱՄՆ-ի հանրայայտ հետախուզութեան գործակալ նկատուածը 350000 (Երեքհարիւր յիսուն հազար)է աւելի քուէ ստացաւ:

Այս դժուար հաւատալի երեւոյթին մասին, 18 Մարտ 2008 թուակիր «Նա-յիրի»ի մէջ բաւական ընդարձակ արտայայտուած էինք:

Այո՛, Լեւոն 350000 քուէ ստացած էր: Մեծամասնութիւնը անոր քուէ տուողներուն, Ամերիկայէն ուղարկուած «Կանաչ դրամներ»ու հմայնքին ենթարկուած պատեհապաշտ հայե՞ր էին արդեօք:

Բայց Լեւոնին քուէ չտուող եռապատիկ թիւով հայեր կային: Եւ այս հայրենասէր հայերը գիտնալով իրականութիւնները, իբր Ամերիկացիներուն, Թուրքերուն և Սիոնիստներուն ուղղակի կամ կողմնակի միջոցներով ծառայութեան կոչուածին պատժուիլը պահանջելու էին... Մեր 18 Մարտ 2008 թուակիր գրութեան «Միտք բանին» այս էր:

Դժբախտաբար մինչեւ այսօր, մեր ակնկալութիւն-նախատեսութիւնը չիրականացաւ:

Այս կացութիւնը կ'ապացուցանէ՞, որ հայ ժողովուրդին մէջ հայրենասիրական ոգին սկսած է տկարանալ ու նահանջել:

25 Յունուար 1997 թուակիր «Նայիրի»ի մեր գրութեան մէջ, Լեւոնը նկատելով ԱՄՆ-ի ծանօթ Սպասարկութեան լծակից-գործակատար, թուրքերուն հետ «Եղբայրացման» քաղաքականութիւն վարելու կողմնակից, հրատարակած էինք



Նկար մը, շատ պերճախօս, ուր կը տեսնուէր Լեւոնը Պոլսոյ մէջ, թուրք և հրեայ ծանօթ անձերու հետ, սիրալիր հանդիպում մը ունենալու պահուն:

(→էջ 5)

Ո՞Վ Է ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ... (Շար. էջ 4-էն)

Նկարը՝ ծախեն աջ՝ Գորշ Գայլեր կուսակցության նախագահ Ալփասյան Թիրքէշի տղան՝ Թուրոուլ Թիրքէշ [որ փոխ-նախագահութիւնը կը վարէ այժմ կուսակցութեան], ծագումով հրեայ, թրքական խորհրդարանի անդամ, մեծահարուստ Ճէֆի Զամհի, և պետական անճնաւորութիւն մը Հայաստանէն -[նախկին ՀՀ-ի Ազգային ժողովի անդամ, այժմ հանգուցեալ] Թելման Տէր Պետրոսեան [եղբայրը Լ.Տ.Պ.ին]:

Նկարը վերցուած է թրքական մամուլէն, որուն հետեւեալ ծանօթագրութիւնը կ'արժէ խորհրդածութեան միւթ ընել. «...Կողմերը ծանրացան երկխօսութեան յարատեւման, տնտեսական յարաբերութիւնները խորացնելու և քաղաքական շրջանակներուն միջեւ իրարհասկացողութիւնը ապահովելու վրայ...»:

25-1-1997 «Նայիրի»

Այսօր ալ կը հրատարակենք ^{**} 1993-թ-ին Փարիզի մէջ, Լեւոն Տէր Պետրոսեանի [Ալփասյան Թիրքէշի հետ] ունեցած ուրիշ մէկ ցնցիչ նկարը՝ որուն մասին ալ պիտի արտայայտուիմք մեր յաջորդ գրութեան մէջ:



ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ԱՅՍ ԱՓԷՆ ԴԷՊԻ... ՄԻԻՍԸ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆ...

Հայ-Ռուսական պաշտպանական դաշինքը, որ կ'երաշխաւորէ Հայկ. Հանրապետութեան տարածքին և բնակչութեան անձեռնմխելիութիւնը և անուղղակի կը տարածուի նաեւ Արցախի վրայ, ունի պատմական բնոյթ ու կը ներկայացնէ կենսական կարեւորութիւն հայութեան համար:

Անով կը դառնայ անխոցելի մեր Արցախը, իր ինքնիշխանութիւնն ու գոյութիւնը՝ խաղաղ ու ապահով պայմաններու մէջ:

Ռազմական-պաշտպանական վերանորոգուած Ռխտը ի գօրու է մինչեւ 2044:

Դաշնագրին մէջ ընդգծուած է, որ Հայաստանը բիրախ ունեցող ամէն սպառնալիք ու բշխմանական յարակնութիւն պիտի շարունակէ նկատուիլ, այսուհետեւ եւս, ուղղուած Ռուսիոյ... և հաւաքական անվտանգութեան պայմանագրի ստորագիր երկիրներուն:

Հայկական Հանրապետութեան ամբողջականութեան, գոյութեան ու խաղաղ պայմաններու մէջ զարգացման երաշխաւոր դարձան նաեւ «Հաւաքական Անվտանգութեան Կազմակերպութիւն»ի անդամ երկիրները:

Աւելին՝ վերանորոգ այս դաշինքը և յատկապէս Հայ-Ռուսական ռազմավարական գործակցութիւնը կը դառնայ նոր ու անխորտակ հիմք Հայկական Պահանջատիրութեան ընթացումին, աւելի ուժական և ազդու պայմաններու մէջ: Ինչ որ, մեր ժողովուրդին կը դարձնէ, առաւել ինքնավստահ և յուսալից իր ապագային նկատմամբ:

Ողջունելի այդ դաշինքով վերստին գործնական ոյժ կը ստանայ ծանօթ ասացուածքը, որ շատ տասնամեակներ կապույտ ու անվրդով պահեց հայուն երկինքը, փակի որ... «Արախ գետին Արեւմտեան ափէն դէպի Արեւել տանող ուղին, այսուհետեւ ալ Մոսկուայէն կ'անցնի...» ի մեծ դժբախտութիւն հայութիւնը շիլ աչնով դիտող հին ու նոր նենգամիտ դաւադիրներուն:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՈՒՆԱԿՈՒՆՆԱՆ
(ԿԵՇ ՈՍՈՒՔԵՆԵԱՆ)